Ե. ՏԱՐԻ ԹԻՒ 1416 29 2nci Kanun 1936 — ԳԻՆ 4 ՂՐՈՒՇ — ՋՈՐԵՔՇԱԲԹԻ 29 ՀՈՒՆՈՒԱՐ 1936

AREVELK
Siyasi, İktisadi ve edebi
resmî gazete
Galata, Tunel itfaiyesinde, Billur Sokak
No. 10

AREVELK
ԱՒՐԵԻԵԼՔ

ՀԵՌԱԽՕՍԻՆ 40852 ◆ ՔԱՂԱՔԱԿԱՆ---ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ ◆ Telefon 40852

Պիյուր փոզոզ թիւ 10
Ղալաթիա, Թիւճկի կից
AREVELK
Quotidien Arménien Politique
Economique et Littéraire
Galata, B. P. 1203
ԽՄԲԱԳԻՐ ՅՕԴ
ՈՐԲԷՆ ՃԷՄՃԷՄԵԱՆ

ԶՕՐԱՒԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՆՄԱՆ ՇՈՒՔՈՎ ԿԱՏ ՐՈՒԵՑԱՒ

6 թագաւոր, 27 իշխան, 33 դեսպան եւ 50 ջոկատ զինուոր կը մասնակցէին ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Հազարաւորներ գիշերը աւուրց անցուցին տեղ բռնելու համար

ԼՈՆՏՈՆ, 28.— Կէս գիշերէն քիչ վերջ Էտուարտ թագաւորը իր եղբայրներուն հետ կէս ժամ պահակ կեցան իրենց հօր դագաղին վրայ։

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ ՍՈՒԱՋ

ԼՈՆՏՈՆ, 27.— Էտուարտ թագաւորը իր հօր հաստատած սովորութեան համաձայն, Պըքինկհէմի պալատին մէջ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ յուղարկաւորութեան մասնակցելու եկած թագաւորներուն, իշխաններուն եւ բոլոր միւս պատուիրակութեանց պետերուն։ Կոչնականներուն թիւը 50ի կը հասնէր բոլորն ալ այր։

Ցարակից սրահի մը մէջ Մէռի մայր թագուհին, Նորվէկիոյ թագուհին եւ անգլ. եւ օտար ուրիշ արքայից ընտանիքի պատկանող 18 տիկիններուն հետ ընթրիք ըրաւ։

Մէռի թագուհին եւ արքայական ընտանիքին միւս անդամները գիշերը վերջին այցելութիւն մը տուին հանգուցեալ թագաւորին։ Այցելութիւնը 10 վայրկեան տեւեց։ Թագուհիին կ'ընկերանային Պելճիքայի, Տանըմարքայի եւ Պուլկարիոյ թագաւորները։

Ժամը 22ին, մօտաւորապէս 175 000 հոգի վերջին այցելութիւնը տուած էին հանգուցեալին։

Այցելուներուն մէջն էր Լոյտ Ճօրճ, որ թոռնիկին ծեռքէն բռնած էր։

ԼՈՆՏՈՆ, 28.— Երէկ գիշեր Լոնտոնի մէջ արդէն իսկ համախմբուած էին յուղարկաւորութեան մասնակցելու եկող բոլոր վեհապետները, օտար իշխաններն ու պատուիրակութիւնները։

Ամբողջ 6 քիլօմէթր տարածութեան վրայ, 6 թագաւորներ պիտի հետեւին Ճօրճ Ե.ի դագաղին։ Աշխարհի բոլոր կողմերէն մինչեւ հիմա 1500 ծաղկեպսակներ եկած են, մէջը ըլլալով Իրլանտայի ազատ պետութիւնը։ Խորհ. Ռուսիա, Ճաբոն եւն.։

Թղթատարական նախարարութիւնը կարգադրութիւններ ըրած է որպէս զի յուղարկաւորութեան մանրամասնութիւնները զանազան լեզուներով հաղորդուին աշխարհի ամէն կողմը։

Անգլիերէն լեզուով պիտի հաղորդուի Տանըմարքայի, Նորվեկիոյ, Շուէտի, Ֆինլանտիոյ եւ Չեխոսլովաքիոյ։ Գերմաներէն՝ Գերմանիոյ, Ցրանսերէն՝ Փարիզ, Պրիւքսէլ, Մատրիտ եւ հանանաքար ուրիշ երկիրներ եւն., Ցլամաներէն Պելճիքայի կարգ մը մասերուն, հոլանտերէն՝ Հոլանտայի, Լիթուանիոյ եւս պիտի հաղորդուի։

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԹԱՓՕՐԸ

ԼՈՆՏՈՆ 28.— Յուղարկաւորութեան թափօրը սա կարգով կազմուած է.—Ամէնէն առջեւէն կը քալեն ծովային, ցամաքային եւ օդային բանակներու, գաղթապետութեանց եւ գաղութներու սպաները։

Ասոնց եռեւէն կը յառաջանան օտար բանակներու ներկայացուցիչ ջոկատները, օդային, ծովային եւ ցամաքային զինուորներէ բաղկացած, դնկերակցութեամբ զինուորական նուագախումբերու։ Ապա անգլիական բանակներու սպայակոյտերու սպաներ, զինուորական նուագախումբով եւ արքունիքի բազմաթիւ պաշտօնատարներու հետ։

Արքայական դագաղը կրող թնդանօթի կառքը գնդապետէն կը յառաջանայ։ Կառաւարը Ը. թագաւորը միսմինակ կը քալէ, եռեւէն իր եղբայրները, Եօրքի, Կլուսէսթրի եւ Քենթի դուքսերը, ապա Ա՛թլօն կոմսը եւ Նորվեկիոյ թագաւորն ու գահաժառանգ իշխանը։

Ցաջորդող շարքին մէջ են Ցրանսայի հանր. նախագահ Ալպէռ Լըպրէօն, Տանըմարքայի եւ Ռումանիոյ թագաւորները եւ Պելճիքայի թագաւորները։

Ուրիշ 23 իշխաններ ասոնց կը հետեւին։ Քանի մը մէթր հեռաւորութեամբ կը յառաջանայ Մէռի թագուհիին կառքը, ուր նստած է Նորվեկիոյ թագուհին (հանգուցեալին քոյրը), արքայատոհմ իշխանուհին եւ Եօրքի դքսուհին։

Այս շարքին կը հետեւին բոլոր օտար արտաքին գործերու նախարարներն ու դեսպանները։ Ոչ թէ Ուինսօրէն, այլ Լոնտոնէն մեկնած Եօթ կառքերուն մէջ կը գտնուին Սպանիոյ թագուհին, կլուսէսթրի եւ Քենթի դքսուհիները եւ Արթիւր Քըննօթ իշխանուհին։

Այս եօթ կառքերուն եռեւէն կ'երթային օտար արքայական ընտանիքներու անդամները իրենց հետեւորդներով, ինչպէս նաեւ օտար պատուիրակութեանց անդամները, ցամաքային, ծովային եւ օդանաւային բանակներու սպաներ եւ զինուորական կցորդներ։ Թափօրը կը փակեն զինուորական ուրիշ ջոկատներ։

ԼՈՆՏՈՆ 28.—Ուէսթմինսթըր Հօլի դուռները այս առաւ ժամը 4ին փակուեցան։ 4 օրէ ի վեր 809,000 հոգի թողանցեցին արքայական դագաղին առջեւէն։ Բազմաթիւ անձեր գիշերը փողոցներու մէջ անցուցին,

Առաւօտեան ժամը 8ին, ժայրաքաղաքին մեծ փողոցները մարդկային ղոյզ ցանկապատ մը կը ներկայացնէին։ Ամբոխը հանդարտ եւ երկիւղած եր. հակառակ խոնաւ ցուրտին, որուն չափերը դիմացած էին եօթ ուէթ ժամէ ի վեր։ Անվերջանալի շարքերով սպասիկները տեղ կը գրաւեն։

Արդէն արշալոյսի առաջին նշոյլներուն հետ, ժողովուրդը խուժած էր այն փողոցներն ու հրապարակները, ուրկէ պիտի անցնէր թափօրը։

(Շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՀԱՊԵՇՆԵՐԸ Կ'ՈՒԶԵՆ ԿՏՐԵԼ ՄԱՖԱԼԼԷ--ԱՏՈՒԱ ԳԻԾԸ

Մարաջախտ Պատօլիօ կը հաղորդէ թէ կարմիր եաչը ռազմանիւթ կը փոխադրէ

ՀՌՈՄ 28.— Պաշտօնական շրջանակները կը հերքեն օտար աղբիւրներէ բխած այն լուրերը թէ, Թուրքիոյ եւ Մօնթօվիի պահակազօրաց մէջ ըմբռնաւորութիւն ծագած է։

ԻՏԱԼ. ՆՈՐ ՁՕՐԱԿՈՂ

ՀՌՈՄ 28.— 1915ի ծննդեան գինուորագրուածները, որոնք ինքնաշարժի սպասարկութեան կոչուած են, գրօշի տակ կանչուեցան Փետր. մէկի համար, և ոչ թէ Ապրիլին, ինչպէս որոշուած էր նախապէս։

ՀՌՈՄ 27.— Պաշտօնական զեկոյցը կ'ըսէ.—

Սօմալիի ռազմաճակատին վրայ, մեր մեքենականացած զօրաբաժինները հետագոտիչ աշխատ մը կատարեցին դէպի Ուատէրա, Նէկէլլիէն մօտաւորապէս 70 քիլօմէթր դէպի հիւսիս։ Թշնամին կարճ դիմադրութենէ մը և ռազմանիւթի մթերանոցը օգը հանելէ վերջ, ետ քաշուեցաւ։ Բազմաթիւ գերիներ բռնուեցան և գրաւուեցան ուսեհատիչն և ռազմանիւթ։

Զրահապատ ինքնաշարժերու զօրասիւն մը զօր. Ակօսթինիի հրամանատարութեամբ. Տուարտրմոյի երկայնքէն յառաջացաւ, հեղլէն ըսպայի մը հրամանատարութեան տակ գանուող հապէշ գունդերը նահանջելէ վերջ, մեր զինուորները գրաւեցին Մալքա Միւրրին, Տօլոյէն 260 քիլօմէթր անդին։ Այս զօրասիւնին դէմ մղուած կռիւներու ընթացքին հապէշները 1467 հեռալ ունեցան։ Կանալէ Տօրիայի ճակատամարտին և անոր յաջորդող հալածանքին առնն, թշնամին ունեցաւ 10 000 մեռեալ։ Մեր կորուստները քիչ են։ Մեր բիրկ զինուորները հարիւրի մօտ մեռեալ ու վիրաւոր ունեցան։ Բաս Տէսթայի զինուորական խորհրդականն պելճիքացի սպային պայուսակները ձեռք անցուեցան մեր գունդերուն կողմէ։

ՄՍՐԱՁԱԽՏԸ ՅՕՈՒԵՏԵՍ ՉԷ

ԱՄՄԱՐԱ, 28.— Մարաջախտ Պատօլիօ կիրակի օր լրագրողները ընդունելով, հետեւեալը յայտարարեց անոնց։

Ներկայիս կարելի է ձախողած նկատել այն յաւակնագիծը, որուն համաձայն Բաս Մէյտում և Բաս Գասա կ'ուզէին խորտակել իտալ. գիծերը։ Կացութիւնը յոռետեսութիւն չի ներշնչեր. հակառակ մեծ հեռաւորութեան, պարենաւորումը ապահովուած է, քանի որ ճամբաները լաւ վիճակի մէջ են։ Եթովպիացիք պարզապէս ցնորք տարուած էին երբ կը կարծէին թէ անձրեւներուն պատճառով ճամբաները անանցանելի պիտի դառնան։

ՀԱՊԷՇ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

ԱՏԻՍ ԱԲԱԳԱ, 28.— Պաշտօնական լուրերու համաձայն, իտալացիք կը փորձեն վերագրաւել Ցունվար 20ին և 23ին իրենց կորսնցուցած գիրքերը։

Անդադար յարձակումներ կ'ընեն, սակայն դեռ չեն հասած իրենց գլխաւոր նպատակակէտին, այսինքն կարել հաղորդակցութիւնները Մաքալլէի և Ատուայի միջեւ, որպէս զի իտալացիք սուիպուին պարպել Մաքալլէն։

ՁԻՊՈՒԹի, 28։— Սթէֆանի կը հաղորդէ թէ Նէկէլլիի գրաւումը մեծապէս մտահոգած է հապէշ զինուորական և քաղաքական շրջանակները

ՀՌՈՄ, 28.— Մարաջախտ Պատօլիօ կը հետագրէ թէ, Սօմալիի ճակատին վրայ, Ուատէրայի շրջանը կատարուած հետագոտութեան մը ընթացքին, իտալացիք վերագտան չուէտական շարժուն հիւանդանոցը, կարմիր Խաչի նշանը կրող ջամիոններու որոնք կը պարունակէին 27 անուտուկ ռազմանիւթ։

Այս ձեռք անցած ասարին մէջ կայ նաեւ Բաս Տէսթայի դիօրակը։

Քալկանի մէջ ճակատամարտ Չին եւ Մանչու-մօնկոլ ուժերու միջեւ

ՓԷՔԻՆ 28.—Քալկանի մօտ ճակատամարտ մը տեղի ունեցաւ չինական 29րդ զօրաբանակի ջոկատներուն և մօնկոլ—մանչու անկանոն ուժերու միջեւ, զոր կը վարէին ճաբոնցի սպաներ, «Ռօնինո անունով։ Ասոնք ճաբոն զինուորական գաղտնի ընկերութեան մը կը պատկանին ու անձնապէս կը գործեն։

Հաւանական է որ այս դէպքէն վերջ ճաբոնցիք նոր պահանջներ գտնեն, օրինակ՝ պահանջեն որ 29րդ զօրաբանակը քաշուի Քալկանի մէջ ունացող միակ չինական բանակն է ան։

ԼՈՆՏՈՆ 28.—Ճաբոն չրջանակներու արուած լուրերու համաձայն, ահմանային դէպք մը տեղի ունեցած է Մօնկոլիոյ և Մանչուրիոյ մէջ։ Անցեալ Ցորեքշաբթի մանչուրիական զօրագունդ մը յարձակում կրած է 100ի չափ մօնկոլ զինուորներէ, սահմանէն 80 քիլօմէթր անդին։ Մանչուրիացիք ետ քաշուած են ձգելով մեռել մը և գնդացիր մը։ Սակայն զերի բռնեցին 2 մօնկոլներ։

Կը հաւատացուի թէ Մօնկոլները հրասայլ գործածած են։ Մանչու կառավարութիւնը բողոքեց։

Զօրավար Վօլֆօֆ պատասճառները կը ցուցիր Իտալիոյ

ՀՌՈՄ, 28.— Իտալիոյ գրամական գրութիւնը ապահովելու համար արուած ոսկիներուն մէջ աչքառու է Պուլկարիոյ նախկին պաշտպանական նախարար Զօր. Վօլֆօֆի ստացածը։ Զօրավարը իր բոլոր պատասխանները նուիրեց Տիկինն ալ ամուսնին ժառանգին և մեծաքանակ օտար դրամ յանձնեց։

ՀԵԼԼԷՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՉ ՄԷԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՅԱՂԹԱԿԱՆ Է

Դէպի Ազգ. Միութեան դահլիճ

ԱԹԷՆՔ 28.—Թէեւ վաղը յայտնի պիտի ըլլայ վերջնական արդիւնքը, սակայն մինչեւ հիմա հաւաքուած քուէները սա համեմատութիւնը կը ցուցնեն.—

Վէնիզէլոսականները՝ 124 պատ., Ցալտարիսի կուսակցութիւնը՝ 65, Գոնտիլիսեանք՝ 60, համայնավարներ՝ 16, ռամկավարներ՝ 12, Մեթաքսաս՝ 11։ Իսկ մնացեալ 12 պատգամները դեռ յայտնի չեն։

Վարչապետ Տէմիրճիս անմիջապէս պալատ գնաց ուր թագաւորը չնորհակալութիւն յայտնեց իրեն. ընտրութիւնները անաչառ և կատարեալ կերպով կատարած ըլլալուն համար։ Վերջնական արդիւնքը յայտնի ըլլալուն պէս, թագաւորը պիտի կանչէ բոլոր կուսակցապետները և անոնց կարծիքը պիտի ուզէ կացութեան մասին։

Թէեւ Ազատականները պատգամներուն մեծ մասը կը չահին, սակայն կառավարութիւն մը կազմելու չափ զօրաւոր չեն և պէտք ունին ուրիշ կուսակցութեանց օժանդակութեան։

Ցալտարիսեանք և Գոնտիլիսեանք 125ի մօտ ձայն պիտի ունենան նոր ընտրողատան մէջ, եթէ միանան իրարու։ Բոլ չպիտի տան որ Ազատականները դահլիճ կազմեն։ Թագաւորը կը փափաքի որ ազգային միութեան դահլիճ մը կազմուի Ազատականներուն եւ Ցալտարիսեաններուն մասնակցութեամբ։ Կը թուի թէ թագաւորին տեսակէտը պիտի յաղթանակէ։

ԱԹԷՆՔ, 28.— Ներքին նախարարութիւնը հաղորդեց ընտրութեանց հետեւեալ արդիւնքները.

Վէնիզէլոսեանք՝ 124, Ժողովրդականներ՝ 65, Գոնտիլիս-Թէոֆանիս՝ 60, Մեթաքսաս՝ 7, Հանրապետականք՝ 2, Համայնավարներ 16, Գոճամանիս 4։ Բացարձակ մեծամասնութիւն ոչ մէկ կուսակցութիւն կ'ունենայ։

Վարչապետ Տէմիրճիս յայտարարեց թէ նոյնիսկ եթէ երկու հակառակորդ կուսակցութիւնները միանան, դարձեալ պէտք է կազմել ազգ. միութեան դահլիճ մը։

Ազատական երեսփոխան կոնթոս. որ երէկ ընտրուեցաւ, ճառ մը խօսելով, պանծացուց թագաւորին անաչառ կառավարութիւնը։

Էդէն-Ցրանսէն Ա. տեսակցութիւնը

Տեսակէտներու կատարեալ նոյնութիւն

ՓԱՐԻԶ 28.— Առտուան թերթերը կ'անդրադառնան Ցլանտէն—Էդէն առաջին տեսակցութեան, որ երէկ տեղի ունեցած է Լոնտոնի մէջ։

«Մաթէն» կը դրէ.— Երկու նախարարներուն տեսակցութիւնը մասնաւորաբար սիրալիր եղաւ և գործաւ միջազգային քաղաքականութեան բոլոր կէտերուն չուրջ։ Հաստատուեցաւ որ տեսակէտներու նոյնութիւն կը տիրէ։

«Լէօվռէ կարծիքով, երկու նախարարները կարգ մը նիւթեր չեշտելու առեն չունեցան, սակայն աւելի քան հաւանական է որ ձօրճ Թագաւորին յուղարկաւորութենէն վերջ, կրկին պիտ տեսնուին բոլոր խնդիրներու մասին։

Գիտենք թէ, Ցլանտէն կ'ուզէ խօսք բանալ Հենռոտ ապագինեալ զօրքի խնդրի մասին։ Կը տեղեկանանք թէ Քէ տ'Օրսէն (Ցրանսայի արտաքին նախարարութիւն) կ'ուզէ որ անգլիերէնգլապոլճ բանակցութիւններ բացուին այս խնդրի մասին։ Հաւանական որոշում մը կրնայ ազդել Գերմանիոյ որոշումներուն վրայ։ Կարելի՞ բան է որ Լանտոնի կառավարութիւնը փափուկ բանակցութեան մը չկոչի Գերմանիոյ հետ, իտալեհապէշ վէճը չաւարտած։

Փարիզի մէջ, հինգշաբթի օր, դաչիճին յայտարարութիւնը կատարեալ բարեացակամութիւն ցոյց պիտի տայ Ցրանքլեզերման մերձենալման համար, պայմանաւ որ Ազգերու Դաչնակցութեան չրջանակին մէջ տեղի ունենայ։

Աւելի սահպղական հարց մը կայ, զոր Ցլանտէն գոնէ անցզատկի պիտի յարուցանէ Էդէնի հետ։ Ահիկա Նորէն Միջերդաժովի հարցն է։ Ինչպէս յայտնի է, Անգլիա կը փափաքի Գերմանիան հոն հրաւիրել։

Անգլիոյ կարծիքով, եթէ Գերմանացիք հիմա ներկայ ըլլան Միջերդաժովին, թերեւս կարելի ըլլայ բնդ. համաձայնութիւն մը։

Ցրանսա միտք չունի Գերմանիան զուրս ձգելու Միջերդաժովէն, սակայն նախ և առաջ կը փափաքի որ 4 պետութիւնները համաձայնին մարտանաւերու որակական սահմանափակման մասին։

Ցրանսական խորհրդարանին ԽՈՒԷԷն առաջ

ՓԱՐԻԶ, 28.— Հավաս կը հաղորդէ.—

Նոր կառավարութեան ընդհ. քաղաքականութեան մասին բլլալիք հարցապնդումներուն թիւը կը հասնի 17ի։ Կը կարծուի թէ վիճաբանութիւնը պիտի տեւէ հինգշաբթի կէս օրէ վերջ ալ ամբողջ ուրբաթ օրը և գիշերային նիստի մը ընթացքին ժիայն պիտի աւարտի։

Դիտելի է որ չափաւորները աւելի կողմնակից են հաշտարարութեան, սակայն վերջնականապէս խմբակներուն դիրքը պիտի ճշդուի նախարարական յայտարարութենէն վերջ։

Հիմակուընէ իսկ հաշիւ եղած է որ ալկոզոմի 100ի մօտ ընդդիմադիրներուն դէմ ձախակողմեան և արմատականներէն 250 ձայն ի նպաստ կառավարութեան կայ։

Կը մնան 250 երեսփոխաններ, որոնք դեռ վարանումի մէջ են. ասոնց հարիւրը ընկերվարականներ են։ Կը կարծուի թէ ատոնք կառավարութեան ի նպաստ քուէ պիտի տան։ Այն ատեն դահլիճը մօտաւորապէս 350ի մեծամասնութիւն մը պիտի ապահովէ. ատոնցմէն 25 ընդդիմադիրներու դէմ։

Իսկ եթէ ընկերվարականները ձեռնպահ մնան, նպաստաւոր քուէներուն թիւը պիտի իջնէ 286ի, առաւելագոյն 209ի դէմ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ծանուցում 17/դ, Վեհարի փողոց (Թիֆլիս) վրանաձև և ծոպեր։ Ձիերի ճարտարանոց։ Բնակ. հեռ. 3-07։ Ընդունում ամեն օր 10-ից մինչև 5։ Գործ. հեռ. 3-07։

Ծանուցում 17/դ, Վեհարի փողոց (Թիֆլիս) վրանաձև և ծոպեր։ Ձիերի ճարտարանոց։ Բնակ. հեռ. 3-07։ Ընդունում ամեն օր 10-ից մինչև 5։ Գործ. հեռ. 3-07։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

— Ընդո՞ւէ ...

— Ընդունեմ այդ առաջարկը, միայն թէ...

— Ի՞նչպէս։

— Ես առ այդ համաձայն եմ, միայն թէ ինձ տրուի ազատութիւն ինքս ընտրելու ինձ համար ընկերներ։

— Ընդունուած է։

Եւ այդպէս էլ եղաւ։ Ընկերները ընտրուեցան, եւ Ռուբէնը ազատ արձակուեցաւ։

Ռուբէնը ինքն է պատմում այդ դէպքը։ Ես լսեցի նրանից, եւ ահա ես ձեզ պատմում եմ։

Ռուբէնը ամենաանվեհեր մարդկանցից է։ Նա ոչ միայն ինքն է վտանգի մէջ չի վախենում, այլ եւ ուրիշներին է քաջալերում։ Ռուբէնը ինձ ասաց, որ ինքը ոչ մի անգամ չի զգացել վտանգի առաջ վախի զգացմունք։ Ռուբէնը ասում է, որ ինքը ոչ միայն չի վախենում, այլ եւ ուրիշներին է քաջալերում։

Ռուբէնը ինձ ասաց

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ԳԻՇԵՐ

ԺԱՄԸ 19·45 ԻՆ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՆԹԵԼԸ

ՀԱՅ ՀԱՄԵՐԳ ՆՈՒՏԱՑ

Բատիոյի յայտագրին համաձայն, այս գիշեր ժամը 19.45ին (7.45) Մոսկուայի անթելը նուագահանդէս մը կուտայ Հայաստանի խորհրդայնացման 15րդ տարեդարձին առիթով. յայտագիրը կը պարունակէ գեղեցիկ կտորներ բոլորն ալ Խորհր. Հայաստանի ծաղկեալ երաժշտագէտներու գործերէն քաղուած։

Պիտի երգէ երեւանի Օպէրայի նուագախումբի երգիչ եւ Սայաթ Նովայի երգերուն անզուգական մասնագէտ Շարա Տալեան։

Նուագահանդէսին մաս կը կազմէ սէնիճոնի մը, զոր կը վարէ Մոսկուայի մեծ թատրոնի շէֆ մաէսթրօ Մելիք Փաշաեան։ Ցետոյ՝ պալենդիարեանի «Ալմաստ» օպերայէն կտորներ եղանակներ Ց. Ստեփանեանի վերջերս աւարտած «Քաջ Նազար» օպերայէն. ուրիշ պարերգներ եւ երգեր։

ՕՐ. Ա. ՍԱԼԸՐԵԱՆ

ԵԳԻՊՏՈՍ ՄԵԿՆԵՑԱԻ

Դաշնակահարուհի Օր. Աթրինէ Սալըրեան, որ ժամանած է իր ընտանեաց քէքնիքով և ամրական նուագումով, երէկ առաւօտ եգիպտոս մեկնեցաւ ուսմանական Րհ-տոս մեկնելէ Գաթոլ չոգենաւով։ Օր. Սալըրեան, օգտուելով իր այս ճամբորդութեան առիթէն, մտադիր է մէկ մէկ նուագահանդէս տալ Գահիրէի և Ալեքսանդրիոյ մէջ։ Ցետոյ Նոր Յորք կը մեկնի իր ամուսնացած քոյրերուն կը մազթենք մեր երիտասարդ արուեստագիտուհիին։

ԹՂԼԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

«Ազն Փոսթա» կը գրէ.—

Իսթանպուլի քաղաքապետութիւնը, Կէօյիւքճէրէլի իր տնկարանին համար անհրաժեշտ թաղարները ուղղակի ապահովելու համար, որոշած է թաղարի գործարան մը հիմնել։ Քաղաքակիրթ երկիրներու մէջ այլեւս ճշդուած են քաղաքապետութեանց վիճակած պարտականութիւնները։ Քաղաքապետութեան մը պաշտօնն է ո՛չ թէ վաճառականութիւն ընել, այլ ծառայել հանրութեան։

Իսթանպուլի մէջ դեռ չեն լուծուած ո՛չ ջուրի, ո՛չ կաթի, ո՛չ հացի խնդիրները եւ ոչ ալ քաղաքապետութիւնը շահագրգռող հարցերէն մէկը։

Արդեօք տարօրինակ չէ՞ այսպիսի քաղաքի մը մէջ քաղաքապետութեան թաղարի գործարանի մը շինութեան ծնունդ տալը։

ՀԱՍՈՑԹԻ ՑԱՒԵԼՈՒՄ

Քէբէթէճէների «Հաւուրն չէ» նուագախումբը առաջ։ քաղաքապետարանէն կ'ուզեն, որ 15—20,000 ոսկի թիւը տարեկան հասոյթ կ'ունենայ պատուղի և բանջարեղէնի վաճառատիներէն։ Մինչեւ հիմա որ գործառնութիւնները դեռ հիմա որ գործառնութիւնները կդադրեցած են, 1935ի առաջին եռամսեակին, «հաւուրն հասոյթը հասած են 100 000 ոսկիի և ներ հասած են 100 000 ոսկիի և հաշիւ եղած է որ ամբողջ տարւոյ ընթացքին պիտի հասնին 150—160 հազար ոսկիի։

*** Աթաթիւրք անցեալ օր Անգարայի մէջ ներկայ եղած է թուրք թռչունի ալխասանքներուն և իր գնահատութիւնը յայտնած է։ Անկարգելով յաջող փորձեր կատարուած են։ Այսպէս հիմքէ 2000, իսկ պայտն ալ տրէ 2100 մէթր բարձրութենէ անկարգելով վար նետուած են։

*** Ռերա, Ամալը Մէսէիի մէկ սրճարանին մէջ թուրք խաղացած առենին, բռնուած են երեք զպրոցականներ։ Սրճարանը երեք ամիս պիտի փակուի իբրեւ պատիժ։

*** Վիճակագրութեան մը համաձայն, վերջին մէկ տարուան ընթացքին զբօսաշրջիկի 54 չոգենաւ եկած են Իսթանպուլ և իրենց հետ բերած են 26 895 զբօսաշրջիկներ։ Ասոնցմէ զատ, զանազան ճամբաներով 9215 ճամբորդ եկած է։

*** Կէտիկ Փաշայի Ինամատարական մասնաճիւղը 190 ոսկի է յանձնած կեդրոն։

ԹԱՂԱՊԵՏ. ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Թաղապետական Թատրոնը մեծ թիւով մուտքի ձրի տոմսեր կը բաժնէ, ինչպէս դիտուած է քաղաքապետական խորհուրդի կողմէ։ Նոյնիսկ օթեակներ առանց գրժուարութեան կը յանձնուին զանազաններու։ Այս պարագան անպատեհ նկատելով, քաղաքապետութիւնը նոր կանոնագիր մը պատրաստած է, որուն համաձայն ասկէ վերջ միայն կուսակալքաղաքապետը, Թաղապետական խորհրդականները, Իսթանպուլի հրամանատարը, ընդհ. գաւառապետն ու ոստիկանութեան տնօրէնը ազատ մուտք պիտի ունենան, պայմանաւ որ առաջուընէ հեռաձայնեն և անձամբ երթան օթեակները գրաւեն, փոխանակ իրենց բարեկամները զրկելու։ Իսկ ձրի թիկնաթոռները զրկելու։ Իսկ ձրի թիկնաթոռ պիտի արուի միայն լրագրողներուն։

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

ՎԱՐՉ. ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Հալէպէն կը գրեն թէ, Սուրիոյ հանրապետութիւնը վարչական 8 չորչանակի բաժնուած է ապակեդրոնացման գրութեամբ։ Ուր որ չորս նահանգներն են՝ Հալէպ, Դամասկոս, Հոմս, Համա, Հավրան, Ցորթ, Լիտգիրբ և Իսքէնտէրուն։

ԹՈՒՐՔ ԴԱՍԱԽՕՍ ՄԸ

ԲԷՖԹԼՕՒ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ՔԱՊՈՒԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Իսթանպուլի համալսարանի իրաւաբանական ֆաքիւլթեի հիմնական պետ եղեան իրաւունքներու դասախօս Պ. Էքէմ Մէնտէրէ, ամերիկան կառավարութեան կողմէ պաշտօնի կոչուած է, որպէսզի նախագահ Քեմալի համալսարանին։

Թուրք դասախօսը ամսաթոշակ պիտի առնայ 300 անգլ. ոսկի։ իրեն պիտի ընկերանան նաեւ 3 թուրք մասնագէտ բժիշկներ, որոնք 150ական անգլ. ոսկի պիտի առնան իր ամսաթոշակ։

Մօտ օրէն բոլորն ալ ճամբայ պիտի ելլեն դէպի Ամերիկա։

ՅՈԳԵՆԱԻԻԼՆԴՀԱՐՈՒՄ

Ահերգաբուի առջեւ, հոսանքին պատճառով բախում ունեցած են անգլ. «Իօսին» և հելլէն «Թէսոսբա» նաւերը, երբ Միջերկրականէ կուգային։ անգլ. նաւը եռուէն, իսկ միւսը՝ յատաջամասէն վնասուած են։

Նաւահանգիստի վարչութիւնը քննութիւն բացած և հարցաքննած է երկու նաւապետները։ Թէեւ վարչութիւնը յանձնարարած է. նոյնց ապահով մինչեւ քննութեանց վախճանը, սակայն հելլէն նաւը առանց լուր ծայրէ մեկնած է։ Սօքօնի վաղուց ի վեր ընկերութիւնը, որ սէր է անգլ. նաւուն, պահանջած է գրաւել հելլէն նաւը։ իսկ այս վերջինին ալ գործակատարը վնասուց հատուցում կը պահանջէ։ «Թէսոսբա» վերադարձին, առագանքի պիտի ենթարկուի. առանց արտօնութեան մեկնած ըլլալուն համար։

*** Հելլէն նորընտիր դեսպան Ռաֆայէլ սեսակցութիւն մը ունեցած է վարչապետին հետ։

*** Տնտես. և հանրօգուտ շինութեանց գործակատարութիւնները քննութեան ենթարկած են Վսկոփոր վրայ առկախ կամուրջ մը չինելու ծրագիրը։ Քննութեանց արդիւնքը պիտի յանձնուի Գործարարներու խորհուրդին։

*** Ելեւմտական գործակորը իր տիկնոջ հետ քաղաքս հասած են և քանի մը օր պիտի մնան։

*** Գուլկարիոյ դեսպանատան գործակատարը քաղաքս հասաւ։

*** «Իչ Գանքաբզան որոշած է մասնաճիւղ մը բանալ Եալովայի մէջ։ Այս նպատակով աշխատութիւնները սկսած են։

*** Հացին գինը այսօրուընէ ոկսեալ 11 գրչ. 30 փարայի, իսկ ֆրանճէլայինը 16 գրչ. 20 փարայի պիտի ծախուի, առաջինին գինէն 10 փարա, իսկ երկրորդին գինէն 20 փարա զեղչուած ըլլալով։

ՃՕՐՔ Ե. ԲԱԳԱՒՈՐԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն Ա. էջեն)

կէս գիշերէն ի վեր սպասողներ կային։ Շաւերը առնիքներու վրայ եւլած էին, հեաերնին առնելով նոյնիսկ վերմակ և ծածկոց. ուրիշներ կը փորձէին ցուրտէն պաշտպանուիլ թերթերու չնորհիւ։ Տուներու առջեւ ամպիոններ բարձրացած են, բոլորովին սեւ ներկուած։ Բազմաթիւ վառ ճառատուներու յատաջամասերը նոյնպէս ամպիոնի վերածուած էին, որոնք վարձու արուած էին 60 ոսկի ֆրանքով։

Ժամը 8ին, զինուորները սկսան յորդիլ 6 քիլօմէթր երկայնութեամբ ճամբուն վրայ։

Այսօր բոլոր հանրային վայրերն ու վաճառատուները փակուած են, հակառակ անոր որ Էտուարտ Թագաւոր հրամայած է աշխատանքը չդադրեցնել, որպէսզի ժողովուրդը չվնասուի։

ԼՈՆՏՈՆ, 28.— Նմանը չտեսնուած յուղարկաւորութեան արարողութիւն մը տեղի ունեցաւ Ուէսթմինսթրի Հօլէն մինչեւ Բաթթինկթընի կայարանը։

6 Թագաւոր, 27 իշխան, Հանրապետութեան նախագահ մը, 33 դեսպան եւ լիազօր պատուիրակ. զինուորական աւելի քան 50 ջոկատներ կ'ընկերանային ձօրն Ե.ի յուղարկաւորութեան թափօրին։

Երբ դագաղը հասաւ Բաթթինկթընի կայարանը. բոլոր ելեկտրական լապտերները վառեցան եւ պահակները հրապուրիչ լուռեթեան մէջ, դագաղը ուսերնուն վրայ առին եւ տարին արքայական կառախումբը։

Անմիջապէս թագաւորը եւ իր եղբայրները մտան Ուինտսոր մեկնող շոգեկառքը։

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

ՊԵՐԼԻՆ, 28.— Այս առաւօտ Հիթլէր ներկայ եղաւ հոգեհանգստեան արարողութեան մը որ կատարուեցաւ ձօրն Ե.ի յիշատակին համար, անգլ. եկեղեցիին մէջ։

ՀՌՈՄ, 28.— Իտալիոյ թագաւորը եւ Մուսոլինի այս առտու ներկայ եղան Հռոմի անկլիքան եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած հոգեհանգստեան արարողութեան։

ԱՏԻՍ ԱԲԱԲԱ, 28.— Անգլ. դեսպանատան մէջ հոգեհանգստեան արարողութիւն մը կատարուեցաւ. ներկայ էին գահաժառանգ իշխանը արքայազուններ, բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ դիւանագիտական մարմինը կառավարական հաստատութիւնները ի նշան սուգի գոցուեցան։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԱՆԳԱՐԱՑԻ ՄԷՋ

Երէկ Անգարայի անգլ. դեսպանատան մատրան մէջ, յուղարկաւորութեան առթիւ, հոգեհանգստեան արարողութիւն կատարուած է։

Ներկայ եղած են թուրք պետական ատաձանին, օտար դիւանագիտական մարմնի ներկայացուցիչները։

Քանի մը օր յետոյ, Իսթանպուլի դեսպանատան մատրան մէջ ալ տեղի պիտի ունենայ նոյն արարողութիւնը։

Մահապատիժ Ալպանիոյ մէջ

ԹԻՐԱՆԱ, 28 — Սթէֆանի կը հաղորդէ թէ քաղաքական ատեանը ի բացակայութեան դատապարտեց բազմաթիւ անձեր, որոնք մասնակցած էին Ֆիէրիի ըմբոստութեան։

4 հոգի մահուան դատապարտուեցան, երեքը ցմահ թիապարտութեան եւ երեքը 15 տարուայ բանտարկութեան։ Ուրիշ 6 ամբաստանեալներ անպարտ արձակուեցան։

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

ՊԱՏԻԱՆԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Մոսկուայէն կը հեռագրեն թէ, Գարթագիր կոմիքէն չքաշնանով պատուած է թաճիկիսթանի բանաստեղծ Գահուերին, Աբդուէյճանի բանաստեղծ Վազրան Նէյիրի Զարեանը։

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՑՈՑՑԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԱՒԻՆ

Գահիրէէն կը հաղորդուի թէ Տարանայի և Թանթահի երկաթուղի կոիներու ընթացքին երեք հոգի սպաննուած են։ Ոտանաւորները այս օր նորէն դասադուլ ըրեն։ Դանլիճի ապագնապը դեռ չէ փարատած։

ԵՐԵՔ "ԹԱԳԱՒՈՐՆԵՐ,,

Պէյրութի ոստիկանութիւնը երեք հայիշատակներ ձերբակալած է։ Ասոնցմէ մէկը կը պնդէ եղեր թէ, ինքը Արաբիոյ թագաւորն է. երկրորդը ինքզինքը ներկայացուցած է նոյնպէս Եթովպիոյ կայսրը և որոշած է մեկնիլ Հռոմ, վրէժ լուծելու համար Մուսոլինիէն։ Իսկ երրորդն է, Իլիաս Յակոբեան ասուն հայ մը, որ իր կարգին, թագաւոր ներկայացուցած է ինքզինքը, աւելցնելով թէ 1 միլիոն գնուորուն հետ անոնցմով պիտի օգնէ Եթովպիոյ։

4 ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

ՊԻՏԻ ԿԱԽՈՒԻՆ

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի, Գուբաս-Օրհան կազի ճամբուն վրայ, աւազակներ կողոպտած էին օթօպուս մը և սպաննած երկու ճամբորդներ։ Գամուելայը իր նախորդ օրուան նիստին վաւերացուցէ յիշեալ ոճրագործներուն մասին որուած մահավճիռը, որով չորս ոճրագործները պիտի կախուին մօտ օրէն։

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ ԹՐԻՒԿԱՆ ՆԿԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Մոսկուայէն կ'իմացնեն թէ, փակուածէ թուրք արդիական նկարիչներու կողմէ բացուած ցուցահանդէսը, որ 28 օր տեւած էր և այս ժամանակամիջոցին այցելուներու թիւը հասած է 18,000 հոգիի։

ՖՐԱՆՍ. ԹԱՏՐՈՆ
ՀԱԼՔ ՕՓԷՐԷԹԻ
Այս գիշեր ժամը 20.30ին
ՏԷՆԻԶ Հաւասը
3 արար. 1 պատկեր
Մեծ օփէրէթին վերջին գիշերը
Վազը. հինգշաբթի գիշեր
ՉԱՐՏԱԾ
մասնակցութեամբ Զոզօ Տալմասի և Թօգինեօթիսի

ՀԱՆԴԻՍԱԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ
ԿԷՏԻԿ ՓԱՇԱՅԻ ՆԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ
Յառաջիկայ կիրակի, 2 Փետրվար կէտիկ Փաշայի Ս. Յովհ. Նկեղեցւոյ մէջ պիտի տօնուի 9րդ տարեդարձը Ազգ. Հիւանդանոցի կէտիկ Փաշայի Օժանդակ Մատնախումբին։
Այս առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցուի Օժանդակիս բոլոր սատարողաց. բարերարաց ննջեցեալներուն հոգւոց ի հանգիստ։ Պիտի պատարագէ և քարոզէ Բարձր. Տ. Դէորգ Արքեպսկ. Արսլանեան։ Երգեցողութիւնք պիտի կատարուին Բերայի երկաթ երգչախմբին կողմէ, առաջնորդութեամբ Տիար Ն. Խուսաւէրեանի և մասնակցութեամբ երգեհոնի։
Այս առթիւ կը հրաւիրուին բոլոր թազեցիք, ինչպէս նաև բարեպաշտ ժողովուրդը, ներկայ գտնուելու Օժանդակիս 9րդ տարեդարձի պատարագի արարողութեանց։
Սկզբն. ժամերգութեանց ժ. 8. Ս. Պատարագ ժ. 9. 30։
Կնիք Օժ. Մասնախումբի

FUNUS
ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ
կազմակերպիչ ընկերութիւն
Պէյօղլու, Հաճիսիւլօ փասաժին մէջ, թիւ 37
Ընկերութիւնս ո՛եւէ տեղ ժամանակիդ չունի
ՀԵՌԱԶԱՅՆ 42215

ԴԱՇՆԱԿԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ
ՓՐՕՖ. ԱՐԹՕ ՊԵՆՈՆ Ի ԿՈՂՄԷ
Շաբաթ 31, Ութրաթ իրիկուն, ժամը 18ին
ՖՐԱՆՍ. ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ
ՄՈՒՏՔԸ ՀՐԱՒԻՐԱՏՄԱՄԲ
զոր սառնալու համար գիմել Հարպիէ, Հալաքճեար ճաւ. թիւ 79

ՕՐ. Գ. ԳԱՐԻՊԵԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ
Տեղի կ'ունենայ 2 փետր. կիրակի, ժամը 15ին
ԳԱԶԱ Տ'ԻԹԱԼԻԱՑԻ ՄԷՋ
Ձօխ յայտագրին մէջ, բացի նշանաւոր օտար տեղիներու՝ ինչպէս Հէնտէլի, Շուպերթի վէրաին, Պէթհովէնի գործերէն, կան նաեւ Մանսաի «Անմոռանալի», Մելիքեանի «Կաքաւիկը», Ալէմշահի «Իմ եարը», «Իմ երգը», Մարգոսեանի «Հոյ նարը»։
Բաւարարին կը մասնակցին՝ Օր. Նիկողոսեան, Գ. Գ. Ե. Եէգեան, Ա. Երցեան, Օր.ներ՝ Ա. Հազարեան, Ա. Մխիթարեան Գ. Գ. Գաւիֆեան Ս. Մէհթէրեան։
Դաշնակով կ'ընկերանայ Օր. Ա. Գալըպճեան։

ԵՐԱԺՇՏԱՍՐԱՀՈՑ Դ. ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ
տեղի կ'ունենայ այս գիշեր ժամը 21ին
ՍԱՐԱՑ ՍԻՆԵՄԱՅԻՆ ՄԷՋ
Երաժշտասրահի երգչախումբը
պիտի երգէ Հէնտելի կատարեալ, Շուպերթի, Հայրնի գործերէն մասնակցութեամբ նուագախումբի, զոր պիտի վարէ Մուհիտտին Սաբրը
ԱԼԻ ՍԷԶԱՅԻՆ ՔԱՌԱՆՈՒԱԳԸ
պիտի նուագէ Մօցարդի և Ճէմալ Րէչիտի գործերէն
կանուխէն ապահովեցէք ձեր տոմսերը

Յաջողութեան գաղտնիքը



ՌԱՏԻՕ ԻՆ Ի ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԷՋ
Հազարաւոր անձերու ականջներուն վրայ կատարուած փորձերուն արդիւնքը բլալով՝
Մէկ կողմէն ականջները կը ձերմկնին, ազատը և նյանները կ'անհետացնէ, ականջներուն անուշ փայլուններ մը կուտայ և շունչը կը քաղցրացնէ։ Միւս կողմէ լինտերը կը դարմանէ և կ'ամրացնէ, և ականջներու թշնամի եզոզ մանրէներուն դէմ կը պայքարի, կը սպաննէ և մարսողութիւնը դիւրացնելու համար թուքը կը չատցնէ։

İstanbul Belediyesi
ŞehirTiyatrosu
ԻՍԹԱՆՊՈՒԼԻ
Քաղաքապետ. թատրոն
ԹՍՔԹԱԿԱՆ ԽԱՂԱՑԱՆՔ
Յնվ. 28 Երեքշաբթի ժամը 20ին ՊԼԱՋԱ ԿՕՄԼԻԲԼԻՐ
» 29 Չորեքշաբթի » 14ին մանկական թատրոն
» 29 » » 20ին ՀԻՒԼԼԷՃԻ
» 30 Հինգշաբթի » » »
» 31 Ուրբաթ » » ԿԷՃԻՐԷՆ ՃԷՋԱ
Փետ. 1 Շաբաթ » 14ին Մանկական թատրոն
» 1 » » 20.30ին ՄԻՐ ՆԱՎ
» 2 Կիրակի առաւ. » 11ին ՔՈՐԱՄԱՋՈՑ ՔՈՐՏՈՇԼԱՐ
» 2 » » 15ին ՄԻՐ ՃԱՎ
« 2 » » 20.30ին »

ԱՍԵՆ ՍՈՓԻԿ ՏՐՈՒԵԼԻՔ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԷՐ ՄԸ



ԿՈՒՐԻՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ Սրբոց Պետրոսի

Հռոմէական Կաթոլիկ Ս. Եկեղեցւոյ

վրան Մխոեռ Արեան Խմբի

Վերատեսնող ի ձեռն

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Ձագարան Զրդնամբք Հայկազն Վարուժանուհւոյ

Կո ի նուիրատուութիւն

Արդի Ընտանեաց Կոչնակ Ամսագրի

Վաճառական Հրատարակութիւն

Գրաբար-Հայերէն ՓԱՐԻԶ Ջարդ-գոյներէն

Հ. ՕՒՄԷՐՏԱՒԼԱՆ 1933 Ռ. ՇԻՐՄԱՂԱՆԵԱՆ

Ա.Ձեռնի էրատնջ Փրագրհնող Ե

Հաս ժամն ի ոտանաւոր ի ոտանաւորէ

Հաստոյքը անձեռնախելի՝ հիւթիւնադրամը պիտի կազմէ կոմիտասի անահիտ գործերուն հրատարակութեանց համար։

Կարելի է գտնել Գալիս, Գահէյ գաբու, Սրդարեան խան թիւ 1, կամ Բերա, Փասաժ ա՝Իօրօֆ, Ռուբէնեան երաժշտական պիտոյից վաճառատունը. Գինն է 350 դրշ։

Sahibi ve yazı işleri müdürü
HOREN CAMCIYAN

Basıldığı yer
ARTUN Matbaası
Galata, Tunel Billur sokak 16

ԲՈԼՈՐԷՆ ԳԵՐԱԶԱՆՑ. ԲՈԼՈՐԷՆ ԳԵՐԻՎԵՐ

ԷՐՎԻԼ ԿՕԼՍ

0,08 մլգ. ալխարհահռչակ ա ծելիի տեղբն է։

ԷՐՎԻԼ ԿՕԼՍ 1935ի Լայփ ցիկի Տօնավաճառին մեծ մրցանակը տանած է։

Գերման նուրբ արուեստին և կատարելագործեալ թէքնիքին մէկ գլուխգործոցն է։ Միակ փորձ մը պիտի զօրացնէ ձեզ։

ՓՆՏՐԵՑԷՔ
ԲՈԼՈՐ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՍՈՒՆԵՐԻՆ

ՍԱԿԱՐԱՆ

27 Ցուվ. 1935 Սրաճպսլ

ԳԱ ԱՔՈՒՂՔԵՐ

ՕՐ ԲԱՆԵՒՔՈՒՂՔԵՐ

Ֆրէնչ Ֆօնսիէ Եգիպ.	1886	108,—
» » »	1903	82.—
» » »	1911	80.50
Ներքին փոխառութիւն		99,—
933ի » էրկանի		95,—
Սվազ—Էրզրում		95.—
Անատոլու պարատեղ. Ա.Բ.		43.20
Գ.		44.50
Գօն Անատոլու		4€ 65
Անատօլու բաժ.		£3.15
Իւնի Թիւրք Ա.		25.40
» » Բ.		23.52
» » Գ.		£3.55
Թրամվէյ բաժ.		24,—
Բէժի		2.15,—
Շիրքէթը Հայրիյէ		4.25
Իչ Պանքասը		9.50
Մէրքէզ Պանքասը		60.50
Գօմօնթի		7.—

ՉԷԿԵՐ

Լոնտոն	621.—
Բարիզ	12.06
Հոմ	9.87,—
Գրիւքսէլ	4.73,—
Ջուիցերիա	2,45,—
Հոլանտական (Ֆլորին)	1,17.80
Պերլին	1.97,91
Ամէնք	84,20,—
Աւստրիական	4,18.80
Տոլար	0,79.85
Լէվա	63,46 6
Մատքուա	10.88,52

ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

Սթերլին	620,—
Լիրէթ	155,—
Ֆրանք Ֆրանսական	167,—
Ջուիցերիական Ֆրք.	815,—
Պելճիական Ֆրք.	82,—
Տրախմ	24.
Լէյ	15.—
Լէվա	24,—
Տոլար	125,
Իւյխամարք	34,—
Գանք Օթոման	235,—
Մէճիտիյէ	42.50



ԼՈՅՏ ՏԵՍԱԻ
ԲԱՐԻ ԼՈՅՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐՈՒ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՇԱՐՔԸ



ՓՈՒԹԱՑԷՔ
ՓՈՒԹ[illegible]Ք

ԲԱՐԻ ԼՈՅՏ

Քեռական Ընթերցարան
30 դրս.
Բարի Լոյս Ընթերց. Ա. տարի
35 դրս.
» Ընթերց. Բ. տարի
40 դրս.
» » Գ. Դ. տարի
դրս.

ԴԻՄԵԼ
ՄԻԱԿ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ

Ց. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Անգարա Ճաւուշէսի
Ըչխիա Հֆ.ի խան թիւ 14

ԴԵՂԱԳՈՐԾ
ԿԱՐԱՊԵՏ ՏԻԼԱՆԵԱՆ

Գաղթ. ուշի ծանուցանել իր նախկին յարգոյ յաճախորդներուն թէ հաստատուած է իրրեւ ընկերակից, Մ. Գարոնեան գեղարուեստ, Համամ, Բանկալթի ճաւուշէսի, թիւ 114։

ՍԻՄՈՆ ԳԱՓԱՄՃԵԱՆ
ԳՊՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՑՑԸ
1936
Ժ է. ՏԱՐԻ
Գին 40 դրուշ
Վաճառւի կեդրոնատեղի՝ Իթթաեպուլ, Զուլֆա քէլեր, թիւ 83, Ս. Յակոբեան գրատուն

ԻՆՉ ցաւալի վիճակ է տառապիլ...
Երբ ցաւերը կայ

ԿՈՒՓԻՆ Ը
ՎԵՐՋ ԿՈՒՏԱՅ
ամէնէն խիստ գլուխի, ականջի ցաւերուն և յօդացաւի խիթերուն ու առատապաղերուն
Մասնաւորաբար ազդեցիկ է կոփի, հարբուխի և նման հիւանդութեանց

ԿՈՒՓԻՆ Ը
ԿԸ ՀԱՆԴԱՐՏԵՑՆԷ
ցաւառութեան հետեւանք բոլոր առատապաղերը, մկանունքի, մէջքի և ջղային ցաւերը

GRIPIN

Դեղահատերը փորձեցէք
Գինը 7.5 դրչ. է։ Այէն դեղարան կը գտնուի։

ՓՐԱԹԷԼԼԻ ՍՊԷՐՔՕ
FRATELLI SPERCO

Գալաթա, Զինիլի Բըչքըմ խան Ա. յարկ թիւ 93, 95—97 Թէլէֆօն 44792։

Հայաբնակ Շոգենաւային Ընկ.

ԱՄՍՔԵՐՏԱՄ

Արտաճմաճ ապառարկութիւն

Մօտաւոր մեկնում դէպի Անվէրս, Րօթէրտամ, Ամստէրտամ, Համպուրգ։

Ceres	փետր.	1ին
Ulysses	»	15ին

Փետրուար վերջ մատնուած շոգենաւային ապառարկութիւն. Հասնելի Մարսէյ բոլոր նաւահանգիստներէն։

Դերաձման ապառարկութիւն Ամստերտամէն կոպտաբար

Ulysses	փետր.	10ին
Orestes	Յուլ.	29ին
Hercules	փետր.	12ին

Nippon Yusen Kaisha Tokyo

ՅԱՊՈՆԱԿԱՆ ՓՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ուղղակի ապառարկութիւն

Ուղղակի ապառարկութիւն Յոկոհամայէ, Գոպէ, Տէյրէն։ Զինկիտաոյէ, Նագասաքի, Հօնկ-Քօնկ, Ճաւա, Փոլամպոյէ, Սուէզէ, Բոլթ Սայիտ, Գէյրութ և Պոլսոյ մեկնում։

Durban	Maru	փետր. 21ին
Delagoa	»	Մարտ 18ին

Compagnia Italiana Turismo

Իտալական Թուրիզմօ (CIT) նաւային ընկերութիւնը կը հայթայթէ երկաթուղիի, շոգենաւերու եւ ագանաւերու տոմսակներ աշխարհի բոլոր քաղաքներու համար։

Զրի տեղեկութիւններ կը հայթայթէ, կ'ապահովէ պանդոկի սենեակներ և պակասներու առաքումներու ապահովութիւնը, կ'առանձնէ։

Հարիւրին 70 զեղչ իտալական երկաթուղիներու վրայ։

ԴԻՄԵԼ ՖՐԱԹԷԼԼԻ ՍՊԷՐՔՕ
կալաթա, Զինիլի Րըմքըմ խան, թիւ 95—97

Ընկերութիւնը ոչ մէկ ընկերակցական ներգոյացութիւն է, եւ ոչապի բոլոր քաղաքներու համար նաւատոմսերը, երկաթուղիի տոմսակները և խառն տոմսակները ծովային ցոյցքերին Գալաթա-Փերայի և Գալաթայեան գիծերու համար։ Ճամբորդները կրնան նաեւ իտալական օգտակարութեան ընկերութեան հետ պատուիրել Աթէնք Պրինտիզի գիծին համար։

ԼՈՅՏ ԹՐԻԷՍԹԻՆՕ
LLOYD TRIESTINO

ՄԵԿՆՈՒՄ

ԱՄԻՐԻԱ

Դշ. 8 Յունվ. ժամը 17ին դէպ Գուրկազ, Վառնա, Գոնսթանցա, Օռէսա։

ՍՓԱՐԹԻՎԱՆԹՕ

Դշ. 15 Յունվ. ժամը 17ին, Լայի Գուրկազ, Վառնա, Գոնսթանցա, Նավօրոսեօք, Գաթում, Տրապիզօն, Սամսօն,

ԱԼՊԱՆՕ

Եշ. 16 Յունվ. ժամը 17ին դէպի Գուրկազ, Վառնա, Գոնսթանցա, Նավօրոսիսք. Գաթում, Տրապիզօն, Սամ. , Վառնա և Գուրկազ։

ՔԷՐԻՆԱԼ

Եշ. 16 Յունվ. ժամը 20ին Ղալաթիոյ քարափէն դէպի Փիրէա Պրինտիզի, Վէնէտիկ, Թրիէսթէ։

ԻԶԷՕ

Շբ. 18 Դեկտ. հիւդ ժամը 17ին դէպի Սելանիկ, Միտիլի, Իզմիր, Փիրէա, Փաթրաս, Պրինտիզի, Վէնէտիկ և Թրիէսթէ։

ՅԷՆԻՍԻԱ

Դշ., 22 Յունվ., ժամը 17ին դէպի Գուրկազ, Վառնա, Գոնսթանցա, Օռէսա, Գոնսթանցա, Վառնա, Գուրկազ։

ՄԻՐԱ

Բշ., 20 Յունվ. ժամը 17ին դէպի Փիրէա, Փաթրաս, Նափօլի, Մարսիլիա, Ճէնովա։

ԱՍԻՐԻԱ

Դշ. 22 Յունվ. ժամը 17ին դէպի Գալաթա, Սելանիկ, Փիրէա, Փաթրաս, Պրինտիզի, Վէնէտիկ, Թրիէսթէ։

ՃԷԼԻՕ

Եշ., 23 Յունվ. ժամը 20ին, Ղալաթիոյ քարափէն դէպի Փիրէա, Պրինտիզի, Վէնէտիկ, Թրիէսթէ։

ՄՕՐԷԱ

Դշ. 29 Յունվ. ժամը 17ին դէպի Գուրկազ, Վառնա, Գոսթանցա, Տրապիզօն, Սամսօն, Վառնա, Գուրկազ։

ՊՈԼՍԷՆԱ

Եշ., 30 Յունվ., ժամը 17ին, դէպի Գուրկազ, Վառնա, Գոսթանցա, Նավօրոսիսք, Գաթում, Տրապիզօն, Սամսօն, Վառնա, Գուրկազ։

ՔԻՐԻՆԱԼ

Եշ., 30 Յունվ. ժամը 20ին, Ղալաթիոյ քարափէն դէպի Փիրէա, Պրինտիզի, Վէնէտիկ, Թրիէսթէ։

Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար գիմել Լոյտ Թրիէսթինոյի ընդհ. գործակալութեան, Մէրքէզ Րըմքըմ խան, Գալաթա, թէլէֆօն 44877—8—9 և կամ Բերայի էճէզը Գալաթա Սերայ թէլ 42490

Գործակալութիւնս հրաւիրած չզգենուսներն ընկերութեանս միջոցաւ և կամ պահելով հանգամանքն ընկերութեանց հետ պատրաստ է։

Առնի բոլոր նաւահանգիստներուն համար ապրանքներ ընդունիլ և փոխադրէն ապրանքներ տալ։

«ԱՐԵՒԵԼՔ»ի ԹԵՐԹՕՆԸ = Թիւ 22 =

ՌՕԼԱՆ Տ'ՍԱԼՊԷՌ

ՀՐԵՂԷՆ ԻՇԽԱՆԸ

Ա. ՄԱՍ

ԲԱԺԱՆՈՒՄ

Նափօլէոն ալ այլեւս չէր կրնար մերժել, բայց կը խորհէր թէ. ինք չատ կանուխ, ընկերակցութեամբ Միւրայի և Փիւնոյի սպրդուած էր մէկ կառքի մէջ ճամբորդել։ Հետեւեալ առարկութիւնը գտաւ.

— Մեր մեկնումը ժամը 7ին նշդուած է։ Ինչ՞ ժամանակ չպիտի գանէս պատրաստութիւն տեսնելու։

— Լա՛ւ ինձ կ'օգնէ՛։ արդէն մեծ բան մը առնելու դէատուրքիւն չունիմ։ Ատոր համար ալ անչուշտ ուրիշ կառք մը կը վարձենք։

Այս բառերուն վրայ սկսաւ ծիծաղիլ մեծ զօրապետը և Գօմտէսչէի, Պարսիէ ար Սէվիլի սա խօսքը յիշեց... «Ֆիկառօ գուն անմիտ մըն ես, ահա վարպետը...»։

— Համաձայն եմ, յարեց, գուն այդ պայմաններուն մէջ պիտի կարողանաս մեզ ընկերակցիլ, մինչև Թուլօն, անկէ անդին անկարելի է...։

— Թուլօնէն անդին չպիտի կրնամ քեզ ընկերակցիլ, կ'ընդունիմ։

Եւ մինչեւ այդ օր իր վրայ երբէք այնքան եռանդ ու սէր յայտնած չըլլալու չարժուժով մը յարեց.

— Նափօլէո՛ն, երջանկացուցիր զիս ... քեզ ո՞րքան կը պաշտեմ...։

Ու յանկարծ անոր ձեռքերը քաշելով զեռեղեց անոնց վրայ, իր շրթներուն քաղցրութիւնը։ Ցետոյ երգեցով ու ծիծաղով ճաչարան առաջնորդեց զայն.

Պօնափարթի համար ան գարձաւ ոչ թէ կին մը՝ այլ ճոխազուն տարփուհի մը։

=•=

ՊԱՀՈՒԼՏՈՒՔԻ ԽԱՂ ՄԸ

Ճամբորդութիւնը կատարուեցաւ խաղաղ, առանց ոևէ դէպքի։ Պօնափարթ իր կնոջ հետ մէկ կառքի մէջ կը գտնուէր, մինչ Միւրա և Փիւնօ, Լուիզ Գամփուանի պատրաստած պզտիկ կարասիներուն կառքին մէջ տեղ բանած էին։ Պօնափարթ առանձին չձգելու մտահոգութեամբ իր կինը՝ պատուոյ Օշիորդը հետ առնելու որոշում առած էր։

Օգտիւթ մօտ քիչ մը հանգիստ առնելէ յետոյ, կառքերը յաջորդ օրն իսկ Լիոն հասած էին լուսաբացին։ Այն տեղէն կ'իջնէին մինչեւ Ռոն և Ավինեօն։ Ցետոյ էքս և կը գիշերէին Րօքվիլի մէջ։

Ցաջորդ օրը չատ կանուխ Պօնափարթ Թուլօն կը հասնէր, ուր իջեւանեցաւ նաւային կեդրոնին մէջ։ Նոյն օրն իսկ աչքէ անցնելով կազմ ու պատրաստ բանակը, հեռեւեալը խօսեցաւ զինուորներուն.

«Զինուորնե՛ր, դուք պատուաւոր կերպով մարիք յաղթական պատերազմներ՝ լեռնային ու դաշտային երկիրներու մէջ, հիմա կարգը եկած է ծովուն։

«Այն հռովմէական մեծ բանակները, որոնց օրինակին կը հետեւիք դուք, որոնց բոլորովին չէք տեսիք, բայց որոնց բոլորովին չէք տեսիք, բայց որոնց գործերը՝ պատերազմած են ճիշտ այս ծովերուն բացերը և Ջամայի դաշտերուն վրայ։ Անոնց յաղթութիւններէն վրայ։ Անոնց յաղթութիւնները ապահովուած էին, քանի որ համբերութեամբ ու կամքին ուժովը առկացին յոգնութեան, կարգապահութեան և թշուառութեան։

«Զինուորնե՛ր, ամբողջ Եւրոպայի աչքերը ձեզի ուղղուած են։

«Դուք կռուած էք մեծ ճակատներէ մըսահեղելուն յառաջապահները ըլլալու ձեր գերագոյն կարօվին մէջ պէտք է պատրաստ ըլլաք ոտնակոխ ընել վտանգ, յոգնութիւն և ժահ։ Եւ այս բոլորը պիտի ընէ՛ք ի սէր և ի բարգաւաճումի ձեր հայրենիքին։

«Բոլո՛րդ, ո՛ր գաւերուն, ո՛ր ասպետներուն ալ պատկանիք, պէտք է միութիւն և սէր ունենաք իրարու հանդէպ, չհանելու համար գոփիններ։

«Այսօր ամենայեսին զինուորի ամենամեծ յարգը կը վայելէ, որովհետեւ հանրապետութեան ամենամեծ ցաւն է, պէտք է տրժեցնել ջանաք ա դ պատիւը ձեր անձական հերոսութիւններով։ Այս կերպով միայն պիտի արժանի ըլլաք կոչուելու մեծ բանակին մեծ զինուորները։

«Կեցցէ՛ Ֆրանսա, կեցցէ՛ Հանրապետութիւնը։»

Ցետոյ հաւաքելով իր գլխաւոր զօրավարները, անոնց ալ այսպէս խօսեցաւ.

«Ընկերնե՛ր, եգիպտական իշխանութիւնը՝ սարկօքէն գերիրդարձած Անգլիոյ՝ մեր առջեւ ամէն դժուարութիւն յարուցանելու պատրաստ է։ Իսկ մեր մեծ քշնամիին իր ամբողջ ծովային ուժով փակած է մեր ճամբանները, բայց մեր քաջարի նաւաստիները հրաշք պիտի գործէ քանդելու համար ամէն արգելք, իւրաքանչիւրնիդ ալ մեծ հարստութեան աղբիւրը։

(Շար.)